

- 69 Լուր զերծման նորին կատարեալ համբուն,
Լըւեալ անդանօր բարեկամք ողջոյն,
Երթային առ նա ի խընդակցութիւն,
Զորոց գոհ լինէր բանիւ քաղցրագոյն:
- 68 Եւ քանզի ի դիր անձին ազատման,
Բանք զԵւդոկիոյ բընաւ ոչ գըտան,
Վասն այն չերթայր նա ի քաղաքըն այն,
Այլ հապճեպ դիմէր առ շէն Կոստանդեան:
- 70 Ուր հասեալ նորա օթէր առ ձօր իւր,
Որ առ հըճուութեանն լայր եւ դողդոջիւր,
Եւ ողջագուրմամբ որդւոյն ըզմայլիւր,
Թըռուցեալ յերկինս գոհուցեալ փառս բիւր:
- 71 Անդէն քորք նորին լ' անձն իւր երգակից,
Ծանօթք, սիրելէք, ողջ արեանակից,
Ընդ զերծման նորա դիմօք քաղցրակից,
Լինէին սըրտիւ լեզուաւ խընդակից:
- 72 Արդ Սարգիս թէպէտ էր ուրախալի,
Այլ վըտանգ, ճըգանք եւ վիշտ աքսորի,
Որք տեւեալ էին իբրեւ տարի մի,
Ներգեւեալ էին զիւր կորով կարի:
- 73 Ուստի դադարէր զաւուրս ինչ ի տան,
Զոր ի տեսանել անձինք բազմազան
Երթային առ նա ընծայիւք արժան,
Առ որ յըղէր իսկ Յակօբ զիւր փոխան:

Ե Ր Գ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Գ

Որ արտաճառէ զըզուսն սըրտից
Սարգսի հալածչաց՝ նեղաց ամենից,
Եւ զուրախութիւն իւրոց ծանօթից
Յելսն անդրէն յաշտարչս այս արեւմբից:

- 1 Գարձեալ անդրէն վանեալ Սարգիս
Ի Կոստանդեան պայծառ Պօլիս,